

անոր գաղտնիք-բանալին ԽԱՋԵՐՆ ԼԵՆ, առանց անոնց ճշգրտոյ նշանակութեան, կարելի չպիտի ըլլայ բան մը ընել անոնց մասին, ոչ ալ տաղերու, երգերու և մեղեդիներու մասին, որոնք նմանապէս անլուծելի կը մնան այդ կերպով:

* * * Ես՝ անձնականութիւնով չեմ սիրեր գրագիլ, բայց պարտք կը զգամ յիշեցնել մէկու մը — յողուածագիր Պ. Գուշումեանի — որ համարձակած էր կարծեմ ըսելու չափ թէ Տ. Կովտաս Վր. շարականական հմտութիւն չունի: Այսքան խեղճուկ ու ողորմելի գաղտնիք մը յայտնել մարդու մը դէմ որ ծանօթ է Հայ մատենագրութեան, բանահիւստութեան, յանգերու և յօրինուածքներու: Գոնէ մեզմէ շատ աւելի գիտէ թէ՛ ո՞ր շարականը, ո՞ր գարուն մէջ գրուեցաւ ու երգուեցաւ, և ո՞վ էր երգողը և ո՞ւր և ի՞նչ տղաւորութեան ու հոգեբանական տրամադրութեան տակ երգեց, վտան կրնանք ըլլալ որ, գիտէ այս ամէնը: Յետոյ Պ. Գուշումեանը թող գիտնայ որ Տ. Կովտաս Վրդ. կարող է մեր երգածին — Թրքահայոց — պէս կոկորդային թըրթուացումներով երգել մեղեդի մը, սրբասացութիւն մը կամ ո՛ր և է տաղ կամ շարական: Գիտէ Թրքական եղանակներուն վիճակն ու հանդամանքը, ծանօթ է Թուրք-Արաբ-Պարսիկ եղանակներուն, գիտէ Հիւսիսիկի, Էվլիճ, Կիւսանիկ, Տիւկեան, Չարիկեան և այլ երոժշտական ձայներու, եղանակներու անուններն ու անոնց բառական նշանակութիւնները: Անոր մօտ իրաւ որ կը պակսին քանի մը բաներ միայն, ինչ որ շատերս ունինք: Ահա՛ թէ ի՞նչ են: ՄԵՆԵԽՅԱՆԻՍԻԹԻՒՆ, ՅՈՒՅԱՄՈՒՂՈՒԹԻՒՆ, ՀՊԱՍՏՈՒԹԻՒՆ, այլովքն հանդերձ: Իսկապէս խորամտուտ, զարգացած, և բարի անձնաւորութիւն մըն է, Տ. Կովտաս Վրդ. իր երոժշտական անհամեմատելի կարողութեան հետ: Զի մտնանք ըսելու որ, ՏԻՊԱՐ Եկեղեցական մըն ալ է նոյն ասուն: Բոլորովին տարբեր խնդիր մըն է, գիտուն Վրդ.ին հետ գաղտնիքի անհամաձայնութիւննիս:

Վերջին խօսք, Հայուն Երոժշտութիւնը դու ալ չէ ալ խառնակ, բայց Հայացուած գեղջուկ երգերը Հայ ժողովուրդինն են, որոնց վրայ կը հիմնանք իբրև Հայուն երգը, Հայ ժողովուրդին կողմէ երգուած-

Անարագար ՍԵՐՈՎԷԷ ՔԸՆ, ՊՈՒՐՄԱԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՒԼԻՍ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Անտոյոր շքեղութեամբ մը տօնուեցաւ Հոկ. 11—13 Ուրբաթ, Շաբաթ և Կիրակի օրերը մայրաքաղաքիս բոլոր թաղերուն մէջ՝ Համազգային Մեծ Տօնը:

Հանդէսները նկարագրել իրենց մանրամասնութեամբ աւելորդ բան մը պիտի ըլլար, վասնզի անոնք ամէնն ալ քիչ շատ իրար լրացնէին և իրարու կը նմանէին: Այդ բոլոր հանդէսներուն մէջ հանճարեղ յղացումը և օրուան բուն նշանակութեան բմբունումը կը պակսէր գժրազգարար... սկսելով Ազգային Ժողովի պատուարժան Ատենապետ և բանասէր Տոքդ. Տաղաւարեան էֆ.ի արտասանած ճառէն, որ իբր Ակադեմական սճով մը գրուած յօդուած մը կրնար արժէք մը ունենալ... իբր բանասիրութիւն, սակայն երբէք արժանի խօսքը չէր Ազգ. Ժողովի Ատենապետին, նոյն հանդիսական պահուն արտասանուած:

Տոքդ. Տաղաւարեան էֆ. հնագոյն քաղաքակրթութեամբ մը պճնադարձած ասուն Հայոց ազգը, մուցած էր մերձաւոր ժամանակներու վրայ անդրադառնալ, և ըսել թէ՛ գէթ այն ակտը, որուն անունովը այդ օրը կը խօսէր, շինուած ու կերտուած էր այն հիմին վրայ, որուն նախնական նիւթերը Սահակ և Մեարոպ տունին Հայ ազգին:

Ազգ. Սահմանադրութիւնը՝ իբր քաղաքակրթեալ կազմակերպութեան մը արտայայտութիւն, արդիւնք էր Սահակայ և Մեարոպայ աշխատութեան և Հայ ազգութեան: Եւ ասոնց վրայ անդրադառնալ կարծեմ թէ աւելի պատշաճ պիտի ըլլար, քանի որ առանց այս յիշատակութեան, անիմաստ պիտի ըլլար այս քաղաքակրթական տօնին համար հանդիսաւոր և բացառիկ նիւտի գումարել Ազգ. Ժողովը... Ինչպէս շատ աւելորդ էր շարաթ օրուան յետ միջօրէական այն հանդէսը, որ օտար հիւրերու առջև, ծառայեց միայն սպա-

ողջացանելու թէ տակաւին շատ հեռու էինք քաղաքակրթութենէ եւ զարգացումէ: Տխուր գաղափար մը տուաւ զբժարողդարար այդ հանդէսը, որ աւելի խառնիճազանճ մըն էր քան կարգաւորեալ ու ներկայանալի հանդէս մը:

Եթէ ժողովուրդին խուժուժը կոխուումներու տեղի չտուաւ, պէտք է բարեբաղդութիւն մը համարիլ, վասն զի եղան վայրկեաններ, երբ այս տեսակ զբժարող պատահարի մը անխուսափելիութիւնը տեսնուեցաւ:

Ասիկա՝ Մայր-Եկեղեցւոյ մէջ հաւատարուած տարազայման բազմութեան եւ ժողովրդային խանդավառութեան վերադրուեցաւ եւ ասով արդարացնելու փորձեր եղան: Սակայն ես այս բուռամենքուն համաժողովուրդէն ինչ որ շատ անուշաքարէն արարեցի տուին երկու պատճառ:

Ա. Նախ մեր ժողովուրդին անկարգապահ, սպառնալիցութիւնը եւ վայրկեանի ու օրուան վայելչութիւնը չյարգող սգին, որ նուազ քաղաքակրթութիւն կ'ենթադրէ:

Բ. Կարգադիր մասնախումբին՝ ժողովուրդին այս արամագրութիւնը զխնայով հանդերձ՝ նախազգուշական ո ե է միջոց ձեռք առած չըլլալը:

Եթէ Մայր-Եկեղեցւոյ մէջ պատահածը գիտուած մը ըլլար, անիկա չպիտի կրկնուէր զբեթէ բոլոր թաղերու մէջ, Կիրակի օր: Բոլոր հանդիսավայրերուն գուռը պատահեցան ազեղ գոտու գոչեր, դուռները բռնաբարելու փորձեր եւ նմանօրինակ անկրթութիւններ, որոնք անշուշտ խորունկ կ'ազդէին իր ազգին արժանապատուութեան նախանձախնդիր ամէն Հայու համար:

Բարեկարգութիւնը պահել զբեթէ եւ ոչ մէկ տեղ կարելի եղաւ, տառական կերպով, թէ եւ ինչ ինչ թաղերու մէջ այդ անկարգապահութիւնները եւ անկանխութիւնները շատ գոյգն էին:

Ասոնք ամէնք խանդավառութեան վերադրել ներքի տլ չեմ կրնար համարիլ: Այն խանդավառութիւնը որ իր մէջ այն-

քան վայրենի բան մը ունի որ ամէն նկատում կը փչրէ, բնաւ հաճելի չի կրնար ըլլալ: Եւ կը կարծեմ թէ այդ խանդավառութիւնը անկեղծ եւ ճշմարիտ չէր: Ասիկա աւելի վայրենի հետաքրքրութիւն մը կը բուրէր, քան թէ իրական շահադրդուութիւն մը:

Սառար մեծամասնութիւնը այդ ժողովուրդին, նոյն իսկ գիտակ չէր թէ ինչ բան բերած էր զինքը Մայր-Եկեղեցի կամ թատրոնի մը դուռը:

Անիկա «հանդէս տեսնալու» եկած էր: Ահա՛ միակ խանդավառող բանը: Ասոր համար էր որ — ինչպէս կ'երեւայ դրամական արդիւնքէն — այս հանդէսները շատ արդիւնաբեր ալ չեն եղած, եւ միայն թի ազմուկի մը առիթ եւ միջոց դարձած են:

Հետեւաբար արդիւնքի տեսակէտով Թրքահայերը՝ մեծամասնութիւնը ժամուն հանդէսներ կազմակերպելու փութացած են, եւ հոստոսային շարժում մը միայն ցոյց տուած են: Սակայն իրական եւ մնայուն արդիւնք մը տակաւին չէ ապահովուած, եւ կը սարակուսիմ որ ունենայ ապագային:

Շատ գէշ կերպով վարեցին արդէն այս գործը՝ գործի գլուխ գանուողները: Հանդէսները կատարուելէն, տօնակատարութիւնը աւարտուէն յետոյ, ես չեմ կարծեր որ Յօրեկանական կրթ. գրամագրութիւն համար շատ մեծ դրամ մը գոյանայ, քանի որ մենք երկաթը տաք տաք ծեծելու առաքինութիւնը չունեցանք, եւ հիմա ասէն անցնելէ յետոյ միայն կ'արթնանք խոր քունէ մը:

Մինչ օրինակը մեր աչքին առջեւ էր: Ահա՛ Ռուսահայք, որ նախ հանդանակութեան ձեռնարկեցին... եւ ապա սնամեջ հանդէսներու, որոնց վրայ դեռ գաղափար մը չտացանք, սակայն ապահով կրնանք յայտնել թէ անոնց հանդէսները մեր մանկունակ ու զարոյցականի վայելուչ հանգամանքը չեն ունեցած:

Համազգային Տօնը՝ իր ամբողջութեան մէջ, շատ պատուարեր չեղաւ ամէն պարագայի մէջ Թրքահայոց, մասնաւոր որ այս Տօնին եկաւ խառնուիլ զարձակ ա-

րիւնի հոտ : Ատաբազարի մէջ նոյն իսկ հանդէսին կատարուած պահուէն . . . գարձակալ տգիտութեան և քաղաքավարութեան պակասի հետեւանօք , պատահեցաւ տխուր դէպք մը , որուն ոչ նուազ պատասխանատու էին տեղական կառավարութիւնը՝ իր աննախատեսութեան , և ժողովուրդը՝ նուազ քաղաքավարի ընթացքին համար :

Միակ դրական ու շօշափելի արդիւնքը սա եղաւ որ այս առթիւ խօսուածներէն և գրուածներէն կարգ մը մարդիկ բաներ մը սորվեցան :

Բարի , միամիտ ու անկեղծ դաւառացի մը , Յորելեանի առթիւ կատարուած հանդէսէ մը վերջ , տեսայ որ բեմ բարձրացաւ ու երկու խօսք ըսաւ , որոնք իրենց միամիտ արտայայտութեան մէջ ամբողջ ողի մը կը խտացնէին : Ահա իր բառերը .

« Ս . Սահակի և Ս . Մեսրոպի անունը շատ լսած էի , և կը կարծէի թէ անոնք ալ սովորական սուբբեր են , սրոնցմով լեցուն է մեր Օրացոյցը : Այսօր սորվեցայ որ անոնք պարզ սուբբեր չեն եղեր , այլ շատ նշանաւոր մարդիկ և այսօր իմ Հայ մնալուս գլխաւոր սրտածառը » :

Եթէ այս մարդուն պէս մէկ քանի հարիւր անձ սորվեցան թէ ո՞վ են և ի՞նչ արժէք ունին մեզի համար Սահակ և Մեսրոպ և «Մեղապարտ» Յակօր , ասիկա բարոյական անսխալարիւնելի շահ մ'է , և Համազգային Տօնը գէթ այս տեսակէտով բան մը արժամ պիտի ըլլայ :

* * *

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՍ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Համազգային Տօնին առթիւ Հայ ազգին ամենէն լաւագոյն ընծայարեութիւնը ըրին մեր Հայ-Բողոքական եղբայրները , Ազգ . Ժողովի արտաստօր նիստին ներկայացնելով իրենց համաձայնագիրը :

Այդ պայմանագիրը ո՞րքան գրական արժէք մը ունի , ատար վրայ չէ որ պիտի ծանրանամ հոս : Անոր արժէքը ուրիշ է . անիկա նախաքայլ մըն է սրբազրելու համար այն զարձուրելի սխալը , որ երկուստեք դործուած է՝ 1856ին , Հայ-Բողոքական անջատ հասարակութեան մը կազմութեան թոյլ տրուելով :

Եւ այդ տեսակէտով ասիկա պատմական որոշ նշանակութիւն մը ունի : Իսկ համաձայնագրին բուն նպատակը և ոգին կը մնայ դեռ շատ ատարամ ու անորոշ , և կը կարօտի լուրջ ուսումնասիրութիւններու , զայն գործադրութեան դնելու համար : Ըսուածներէն և գրուածներէն այնպէս կը հասկցուի որ Ազգ . Պատրիարքարանէն անջատ իր գոյութիւնը պիտի պահպանէ նաև Ազգպետարանը : Ասիկա մեզի անբարենելի կը մնայ :

Պատրիարքական-քաղաքական իշխանութեան տակ եթէ ազգին զանազան հատուածները ի մի հաւաքելու , և պետութեան առջև մէկ զանգուած մը , մէկ մտքին մը երեւալու եթէ ձգտում մը կայ , այն ատեն փափաքելի է որ Ազգպետարանը չպահէ իր գոյութիւնը , և միայն Բողոքականաց կրօնական գործերը կարգադրուին Բողոքական դաւանանքին պատկանող ժողովի մը կամ Խորհուրդի մը կողմէ :

Հայ Եկեղեցին խտտապահանջ Եկեղեցի մը չէ , ինչպէս նաև Հայ ազգը մոլեռանդ ցեղ մը չէ , պահանջելու համար որ Հայ անունը կրող ամէն Հայ անպատճառ ի՛ր դաւանանքը ունենայ , և կատարէ ծիսական և արարողական կարգ մը ձեւակերպութիւններ :

Այս պատմութեան հետեւանօք , Հայոց մէջ Կաթողիկոսութեան յաջորդներ ՓՊ . դարէն մինչև ժՊ . դար երբէք ազգութենէ բաժնուելու և անջատ հասարակութիւն մը կազմելու պէտք չտեսան :

1701 ին Մխիթարեան Կաթողիկ միաբանութիւնը հիմնուած էր : 1789ին Թրիէսթէի մէջ դարձեալ Մխիթարեանք վանք հիմնած էին : 1801ին Վիէնայի մէջ նոյն անուամբ վանք մը հիմնուած էր : Զմեռուէն , Անտօնեանք գոյութիւն ունէին . դաւառներու մէջ Հայ-Կաթողիկ եպիսկոպոսութիւններ իսկ հաստատուած էին , և Հայ-Կաթողիկ կաթողիկոսութիւն մը գոյութիւն ունէր , Հայոց մէջ աւելի շատ մոլեռանդութիւն կար . և սակայն շատ նշանակելի է որ Հայ-Կաթողիկ անջատ հասարակութիւն մը գոյութիւն չուներ ,